ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ
ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԹԵՄԱՅԻ

1. Թեմայի վերնագիրը. *Ներբուհական դրամաշնորհի շրջանակում «Բնագիտական առարկաների «Դասավանդման մեթոդիկա» դասընթացի ծրագրերի բարելավում՝ «Ինտեգրված թեմատիկ միավորներ» թեմայի ներառումով»*

2. Ծածկագիրը. *ShSU N 02-SGI-2017 թ*

3. Թեմայի իրականացման համար տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր. *N 02-SGI-2017 թ, «01» մարտի 2017 թ.*

4. Հաշվետու ժամանակահատվածը. *«01» սեպտեմբերի 2017 թ.-ից «30» նոյեմբերի 2017 թ.*

5. Կազմակերպության անվանումը, որտեղ իրականացվում է թեման. *Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան*

6. Թեմայի ղեկավարի
ազգանունը, անունը, հայրանունը. *Ադամյան Նելլի Վոլոդյայի*
հեռախոսը. *094230735*
էլեկտրոնային փոստի հասցեն. *jivhar@yahoo.com*

7. Հաշվետու ժամանակահատվածում թեմայի իրականացման համար հատկացված ֆինանսական միջոցները. *750. 000 ՀՀ դրամ*

8. Թեմայի ղեկավարի ստորագրությունը. _____

«11» դեկտեմբերի 2017 թ.

ԹԵՄԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

2017թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին նախատեսված աշխատանքները ծրագրի թիմը իրականացրել է պատշաճ մակարդակով: Պլանավորված հանդիպումների ժամանակ թիմի անդամները ներկայացրել են հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները: Մասնավորապես՝

- Վերջնական խմբագրվել և 01.10.2017 թ.-ին Երևանի Հայ-Սլավոնական համալսարանում անցկացված «Բնագիտությունը 21-րդ դարում. ուսուցման հիմնախնդիրներ և լուծումներ» համահայկական 5-րդ գիտաժողովին զեկուցվել է «Ինտեգրացված դասի պլանավորման մոտեցումներ» թեմայով աշխատանքը, որը վերցված է տպագրության գիտաժողովի նյութերն ամփոփող «Բնագետ» ամսագրի դեկտեմբեր ամսին լույս տեսնող համարում /հիմքը՝ գլխավոր խմբագիր Կ.Աթայանի տեղեկանքը/:

- «Ինտեգրացված դասը որպես ուսուցման նորացման ուղի» թեմայով աշխատանքը տպագրության է ընդունված «Մանկավարժություն» գիտամեթոդական ամսագրի 2018 թ.-ի 2-րդ համարում /հիմքը՝ ամսագրի պատասխանատու քարտուղար՝ Ս.Գալոյանի տեղեկանքը/:

- Գորիսի պետական համալսարանում 05.10.2017թ. ՈՒԳԸ նստաշրջանում ներկայացվել և տպագրության է վերցվել նախագծի թիմի անդամ, կենսաբանություն 4-րդ կուրսի ուսանողուհի Հ.Միքայելյանի զեկուցումը՝ «Ինտեգրացված ուսուցման նպատակներն ու խնդիրները» թեմայով:

- Տպագրության համար նախապատրաստվում է «Տարբեր առաջադրանքների կիրառական նշանակությունները ինտեգրացված դասեր պլանավորելիս» աշխատանքը:

- Քննարկումների արդյունքում խմբագրվել են թիմի անդամների կազմած ինտեգրացված դասերի ու միջոցառումների պլանները, որոնք կազմակերպվել են աշակերտների և ուսուցիչների, ուսանողների ու դասախոսների համար:

- ՇՊՀ-ի ավագ դպրոցում մանկավարժական պրակտիկայի անցկացման ընթացքում՝ 08.12.2017-ին «Միայն ջրի մասին» բնագիտական գիտելիքների խաչմերուկում ինտեգրացված դաս է կազմակերպվել կենսաքիմիա հոսքի 10-րդ դասարանում (*մեկ շաբաթով պրակտիկայի հետաձգման պատճառով նոյեմբերի փոխարեն դասն անցկացվել է դեկտեմբերին*): Դասի կազմակերպիչ ու անցկացման պատասխանատու՝ ԲՄ ֆակուլտետի կենսաբանություն մասնագիտության 4-րդ կուրսի պրակտիկանտ, ծրագրի թիմի անդամ՝ Հռիփսիմե Միքայելյան: Դասավանդող ուսուցիչ՝ Գոհար Աճիկյան:

- Նախագծի թիմի կողմից 25.11.2017-ին ՇՄ–ի Անուշավան գյուղի դպրոցի հանրույթի համար սեմինար է կազմակերպվել ինտեգրացված ուսուցման և դրա կազմակերպման առանձնահատկությունների լուսաբանման վերաբերյալ: Նույն օրը կենսաբանության ուսուցիչ (փոխարինող), ՇՊՀ-ում նախագծի շրջանակում իրականացված դասընթացի մասնակից Լենա Գրիգորյանի կողմից ողջ հանրույթի ու աշակերտների համար կազմակերպվել է «Զգայարաններ» թեմայով ինտեգրացված բաց դաս՝ 8-10 դասարանցիների մասնակցությամբ: Սկսնակ ուսուցչին թիմը աջակցել է դասի կազմակերպման, դասի պլանի մշակման աշխատանքներում:

- Գյումրու թիվ 15 դպրոցում կազմակերպվել է «Մարդու ծագումը» թեմայով կենսաբանության և պատմության ինտեգրացված դաս: Պատասխանատուներ՝ ՇՊՀ-ում նախագծի շրջանակում կազմակերպված դասընթացի մասնակից Սեդա Սարգսյան և Լաուրա Գրքիկյան:

- Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի աշխարհագրություն մասնագիտության 2-րդ կուրսում 06.12.2017թ. տարբեր մասնագիտության ուսանողների մասնակցությամբ՝ այլ կուրսերի ուսանողների ներգրավումով (աշխ. 3-րդ, հեռակա աշխ.2., մագ. 1, դեղ. 4-րդ դեղ. 3) կազմակերպվել է «Համաշխարհային օվկիանոս» ինտեգրացված բաց դաս: Պատասխանատու՝ նախագծի թիմի անդամ Ա.Ամազարյան:

- Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետում տարբեր մասնագիտության ուսանողների մասնակցությամբ՝ ուսանողների միջազգային օրվան նվիրված կազմակերպվել և անցկացվել է ինտեգրացված ուսուցման տարրերի կիրառումով միջոցառում՝ «Հետաքրքրաշարժ քիմիա: Հարցեր, փորձեր, պատմություններ» խորագրով: Պատասխանատուներ՝ նախագծի թիմի անդամ Կ. Ավագյան և ամբիոնի դասախոս Լ.Մելքոնյան:

- Բուհական ուսումնառության գործընթացում ինտեգրացված ուսուցման ներդրման նպատակով թիմի անդամների և այլ դասախոսների կողմից, որպես կուրսային և ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի թեմաներ են հանձնարարվել բուհի տարբեր մասնագիտական բաժիններում: Մասնավորապես՝

Կենսաբանություն մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողուհի Սահակյան Նազելի - Ինտեգրացված թեմատիկ միավորի ստեղծում «Ջրոլորտ» թեմայի վերաբերյալ թեզ: Ղեկավար՝ Ն.Ադամյան

- Կենսաբանություն մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանողուհի Գրիգորյան Լուսինե - «Գեղարվեստական ստեղծագործությունները որպես «էվոլյուցիոն տեսություն» թեմայի գիտելիքների յուրացմանը օժանդակող միջոց» թեզ: Ղեկավար՝ Ն.Ադամյան

- Կենսաբանություն 4-րդ կուրսի ուսանողուհի Հռիփսիմե Միքայելյան - «Ջրոլորտը որպես կենսոլորտի մաս» ինտեգրացված թեմատիկ միավոր և ուսուցման մոտեցումներ ավարտական աշխատանք: Ղեկավար՝ Ն.Ադամյան

- Կենսաբանություն 4-րդ կուրսի ուսանողուհի Հիդա Ավետիսյան - «Մաթեմատիկայի և կենսաբանության փոխկապակցվածությունը կենսաբանության դասընթացում» կուրսային աշխատանք: Ղեկավար՝ Գ. Օքսուզյան:

- Աշխարհագրություն մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանողուհի Լուսինե Քերոբյան- «Ինտեգրացված ուսուցումը որպես «Բնագիտություն» դասընթացի դասավանդման նոր մոտեցում» մագիստրոսական թեզ: Ղեկավար՝ Ա. Ամազարյան

- Աշխարհագրություն մասնագիտության հեռակա ուսուցման 5-րդ կուրսի ուսանողուհի Հերմինե Սարգսյան - Ինտեգրացված թեմատիկ միավորի ստեղծում «Մթնոլորտ» թեմայի վերաբերյալ ավարտական աշխատանք: Ղեկավար՝ Ա. Ամազարյան:

- «Կենսաբանության դասավանդման մեթոդիկա» դասընթացի ծրագրում /դասախոս՝ ծրագրի թիմի ղեկավար Ն.Ադամյան/ բակալավրի առկա ուսուցման 3-4-րդ և հեռակա ուսուցման 4-5-րդ կուրսերում, մագիստրատուրա 1-ին կուրսում ներառվել են ինտեգրացված ուսուցմանը նվիրված տեսական ու գործնական հետևյալ թեմաները՝

1/Ինտեգրացված ուսուցման առանձնահատկությունները, նպատակներն ու խնդիրները

2/ Ինտեգրացված ուսուցման պլանավորման մոտեցումներ

3/ Ինտեգրացված թեմատիկ միավորներ

4/ Միառարկա և բազմառարկա ինտեգրացված դասեր

5/ Ինտեգրացման երևույթը բնագիտական մտածողության զարգացման գործում

6/ «Բնագիտական գիտելիքների խաչմերուկում» միջոցառման պլանավորում

7/Բնագիտական գիտելիքները գեղարվեստական ստեղծագործություններում

- Լրացվում են նախագծի աշխատանքներն ամփոփող ձեռնարկի ստեղծման համար անհրաժեշտ նյութերը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ

1. Ադամյան Ն.: Բջիջը որպես պետության մոդել // Գորիսի պետ. համալսարանի միջազգային 2-րդ գիտաժողով 16-17 հունիս. 2011 Աշխատանքների ժողովածու էջ 211-217

2. Ադամյան Ն.: Հեքիաթները որպես բնագիտական գիտելիքների ուսուցման միջոց // ՇՊՀ հիմնադրամ Գիտական տեղեկագիր 2016 1 Պրակ Բ էջ 198-209

3. Ադամյան Ն., Ավագյան Կ. Ամազարյան Ա, Միքայելյան Հ.: Ինտեգրացված ուսուցման առանձնահատկությունները // Բնագետ 1, 2017 էջ 23-28

4. Աթայան Կ.: Էկոլոգիական կրթության իրականացումը ֆիզիկայի ուսուցման համակարգում //ԵՊՀ հրատարակչություն Երևան 2013

5. Դավթյան Մ. և ուր.: Կրթաղաստիարակչական համալիր ծրագրի ստեղծման և ինտեգրման մոտեցումներ Ձեռնարկ ուսուցիչների համար // ԱՅՐԵՔՍ Երևան 2002

6. Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ: Քսաներորդ դարի մանկավարժական տեսություններ- Ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար // Երևան, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ 2005, 410 էջ

7. Հանրակրթության պետական կրթակարգ: Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ // Երևան «Անտարես» 2010

8. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Ս. և ուր.: Համագործակցային ուսուցում: Ձեռնարկ // Երևան «Անտարես» հրատ. 2006

9. Հերթական ատեստավորման ենթակա բնագիտության ուսուցիչների մասնագիտական զարգացման, վերապատրաստման դասընթացի ուսումնական նյութեր. ԿԱԻ 2016 Պատասխանատու՝ Կ. Ավետիսյան //Հաստատված է ՀՀ ԿԳՆ 02.04.2016թ –ի , 234-Ա /2 հրամանի համաձայն կրթության ազգային ինստիտուտի տնօրենՆ. Ղուկասյանի կողմից 2016 թ.: հավելված 2, թեմա 6.5

10. Մնացականյան Հ. Ն., Մնացականյան Ա. Է: Ինտեգրված դասերի անհրաժեշտությունն ու մոտեցումները //Բնագետ Գիտահանրամատչելի ու գիտամեթոդական հանդես աշակերտների, ուսանողների և ուսուցիչների համար հոկտեմբեր-դեկտեմբեր 3, 2016. էջ 11-20

11. Ջիվանյան Հ. Ա.: Ֆիզիկական համաչափության գաղափարը որպես ֆիզիկայի դասընթացի գեղագիտական տարր // Բնագետ, 2009, Հատուկ թողարկում, էջ 46-48

12. Սարգսյան Ս.: Էքսկուրսիաները որպես կենսաբանության դասերի կազմակերպման ձև // «Մանկավարժություն», գիտամեթոդական ամսագիր 1-2015, էջ 32-38, Երևան, ՀՀ ԿԳՆ,ԿԱԻ

13. Ильченко В.Р.: Перекрестки физики, химии и биологии: Книга для учащихся // Москва: Просвещение 1986.174 стр

14. Караковский В. А.: Воспитательная система школы: Педагогические идеи и опыт формирования. — М., 1992.

15. Краевский В. В.: Методология педагогической науки //М.,2000.

16. Леднёв В. С.: Содержание образования.//М.,1989.

17. О. Ю. Ужан.: Интегрированное обучение как следствие модернизации образования // Профессиональное образование в России и зарубежом. 2011 N4

18. Федорец Г. Ф.: Проблемы интеграции в теории и практике обучения.// Л.,1990.

19. englishteachandlearn.narod.ru/metodhs/integrlesson.htm., հասանելի է՝ 18.02.2017

20. https://ido.tsu.ru/ss/?unit=199&pag=594 МартыноваМ.В. Интегрированное обучение. Педагогические технологии. Типы и формы интегрированных уроков. հասանելի է՝ 06.03.17

21. moluch.ru/conf.ped./archive/150/7921 Криволапова Е.В. Интегрированный урок как одна из форм нестандартного урока. 2-ой межд. Конф. "Иновационные технологии". Казань май, 2015.հասանելի է՝ 25.02.17

22. nsportal.ru/vuz/pedogogicheskie-nauki/library/2012/09/25/integrirovannyy-urok-kaksredstvomezhpredmetnogo, հասանելի է՝ 03.03.17

23. pedportal.net/po-tipu-materialy-mo/integrirovanny-urok-284550: հասանելի է՝ 27.04.16

24. TEMPUS «ԱՐՄԵՆՔԱ» նախագիծ թիվ 543817- TEMPUS-1-2013-1-SE-TEMPUS SMHES: Որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների իրականացումը Հայաստանում: Դասախոսական կազմի վերապատրաստում: Թեմա 1. Դասընթացի կրթական վերջնարդյունքների ձևակերպում: Աշխատաժողովի նյութեր// Երևան, 24 նոյեմբեր-16 դեկտեմբեր, էջ 4-5

25. VjacheslavGoryainov-https//otvet.mail.ru/guestion/18605435–հասանելի է՝ 20.02.17

ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. «Բնագիտությունը 21-րդ դարում. ուսուցման հիմնախնդիրներ և լուծումներ» համահայկական 5-րդ գիտաժողովին զեկուցվել է «Ինտեգրացված դասի պլանավորման մոտեցումներ» թեմայով աշխատանքը, որը տպագրության է վերցված գիտաժողովի նյութերի ժողովածու «Բնագետ» 2017թ դեկտեմբեր ամսին հրատարակվող համարում:
2. Տպագրության է վերցված «Ինտեգրացված դասը որպես ուսուցման նորացման ուղի» թեմայով աշխատանքը՝ «Մանկավարժություն» գիտամեթոդական ամսագրի 2018 թ. 2-րդ համարում հրատարակելու համար:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

հ/հ	Անվանումը	Ֆինանսավորման ծավալը (ՀՀ դրամ)
1	Աշխատանքի վարձատրություն՝ ներառյալ եկամտային հարկը	*750 000*
2	Այլ ծախսեր, այդ թվում՝	
	սարքեր և նյութեր	
	գործուղումներ	
Ընդամենը՝		750 000

Թեմայի ղեկավար՝ _____ Նելլի Ադամյան Վոլոդյայի
(ստորագրություն) *(Ա.Ա.Հ.)*

ՇՊՀ գլխավոր հաշվապահ՝ _____ Ռաֆֆի Քալաջյան
(ստորագրություն) *(Ա.Ա.Հ.)*

« 11» «դեկտեմբերի» 2017 թ.

ԹԵՄԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՓԱՍՏԱՑԻ ԾԱԽՍԵՐԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Աշխատանքի վարձատրության հողվածով 750 000 ՀՀ դրամը՝ ներառյալ եկամտային հարկը, ստացվել են թեմայում ընդգրկված աշխատակիցների կողմից՝ ըստ իրենց հաստիքային աշխատավարձերի՝ համաձայն սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների համար ներկայացված զեկուցագրի և կատարողական ակտերի:
2. Սարքեր և նյութեր 0:
3. Գործուղումներ՝ 0:

Թեմայի ղեկավար՝ _____

ստորագրություն

«11» դեկտեմբերի 2017 թ.